ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(Շարունակ. տես բազմ. թիւ 2)

Իր վարքն ու գրական գործերը, ազգային գործունէութիւնը, — առաջնորդութիւնը. — պատրիարքութիւնը, — կաթողիկոսութիւնը։

1876 թուականին Սահմանադրութեան վաւերացումը և հաստատութիւնը՝ մեզ Հայոց համար իբրեւ ոսկեդէն շրջան մը կը սահմանուի դրոշմուիլ հայ պատմութեան մէջ։ Հայութեան որդիներէն մին էր ինքն Խրիմեան որ հրճուալից զգացմամբ երգել սկսաւ Ազատութիւնը և գրեց «Ժամանակ և խորհուրդ իւր» այն գեղեցիկ գրքոյկը՝ որ իբրեւ արձակ բանաստեղծութեանց փունջ մը կը հանի մեզ։ «Մարդ չէր հաւատար, կ'ըսէ նախաբանին մէջ, որ հինգ հարիւր տարեկան Թուրքիոյ պառաւած և ամուլ Մայրը երկնելով երկնելով հին աշխարհին համար նոր Մանուկ սահմանադրութիւն մը ծնէր։ Ծնաւ, այո՛, և ստրկացած ժողովուրդներ իբրեւ ազատաբար կը հաստատին զայն»։

«Ո՛վ նորածին մանուկ Սահմանադրութիւն, քո մայրն զքեզ արիւնով մկրտեց և բազում զոհերով տօնեց քո տօն, որպէս զի նախախնամութիւն քո կեանք պահէ և դու մեծնաս նոր կեանք տաս մեր աշխարհի մեռած ժողովուրդին»։

Մինչդեռ Խրիմեան ժամանակը կ'երգէր բերկրած՝ ահա նոյն տարին Թուրքերը վան Հայոց շուկային վրայ կը յարձակին կը կողոպտեն, կը թալէն ինչ որ հայուն կը վերաբերի և յետոյ կրակ կու տան Հայոց թաղերուն։ 1877ին սկիզբը «Վանգոյժ» տիտղոսով տետրակ մը կը հրատարակէ և կը հաւատայ անով կուժ մը չոր լեցուցած ըլլալ իր հրդեհուող հայրենիքին վրայ։ Եւ հեռուէն կ'երգէ.

«Ո՞ տայր ինձ ո՞հ, գեղեցիկդ Վան, Վասպուրական աշխարհի զարդդ ու պսակ, որ աւերակաց ամիսնացեալ մոխրին վրայ նստելով՝ արժանի լինէի զքեզ և քո որդիքներդ ողբալ . . .

Ինչ խորհրդաւոր օր էր հրափրոմութեանդ օր, ով անբախտ Վան, միթէ այն օր քեզ համար սեւ օ՞ր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կը սկսէր, երբ Բիւզանդիոնի վոսփորէն հրամաններ կ'ոլորտային, և Օսմանեան միապետ ինքնակալ կայսր սահմանադրութիւն կը կնքէր։ այն ուրախ օրերում, ո՞հ, մոլեգնութեան հուրն զքեզ լափեց, ծուխով ու մոխրով խեղդեց քո խնդութեան ծայն և շուն։ . . .

Այո՛, այն օրերը, երբ սահմանադիր օրէնք պարտք և իրաւունք կը քարոզէր, հաւասարութիւն կ'ուտէր, քո զրկանք և հարստահարութիւն աւելի եւս ծանրացաւ... Վանտոսպ ըմբոստացաւ յանկարծ, խզեց այս նոր դաշնակցութեան կապը, երիցագոյն եղբայր կրտսերին վերայ յառնելով կը սպաննէր զայն . . . .

Գիտե՞մ, գիտե՞մ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ քնակասնուդ հայրենիք, ով իմ խանձեալ խանձարուր, գա՛մ գա՛մ և քեզ հետ կական բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբաձուէր նստելով զքեզ ողջագուրելով լամ։

Եւ այսպէս կը վերջացնէ. ու հազիւ թէ Վանը ողբալէն կը դադրի Ռուս—Թուրք պատերազմը առիթ կու տայ նորէն ողբալ այս անգամ փոխանակ Վանին, ամբողջ զուտ հայութիւնն որ է Հայրիկին ողբին առարկան։ Ցաղթուող ժողովուրդը իր վրէժը թշուառ Հայերէն կ'առնուր. Մշոյ դաշտը, Բազրեանդայ գաւառը և ամբողջ Վասպուրականի նահանգը արիւնի և կրակի մէջ է։ Պանդուխտ Հայրիկը «Հայ գոյժ»ով կ'ուզէ մխիթարել իր թշուառ ժողովուրդը. զոր կը հրատարակէ 1877ին։

«Ցուռ բեր, կ'ըսէ ցառաջաբանին մէջ, Վասպուրական գաւառի շինական ժողովրդոց յորդոր կը կարդայի, որ Վանայ կրակին վերայ ջուր լեցնեմ և օգնեմ թշուառ Վանեցւոց։ ես չէի գիտեր և չէի գուշակեր որ Վանայ կրակէն յետոյ պիտի եկէր ուրիշ պատուհասիչ Մարական կրակ մը... ես արդ մոռցայ զՎան և զՎանգոյժն, արդ կը սկսիմ Հայգոյժ ողբալ մեր համատարած աղէտները, զորս վայրագ խուժերուն ձեռքէն կրեց հայոց անուէր ժողովուրդ։

Ինչ անբախտ և թշուառ ես դու, մա՛յր, թէ մեռնիս այժմիկ. երբ ուրիշ մայրեր և ազգեր ի

digitised by A.R.A.R.@

նոր կեանս կը վերածնին. քո կեանք քառասուն դար է ցունական կրակէն, Պարսկական կրակէն, Ալարացուց կրակէն, թաթարներու կրակէն ողջ անցար, անոնում անոնամար զոհեր տուիր, որպէս զի մնացորդ որդիքներովդ ապրիս. և արդ ապիկար և վատազգի քիւրտին կրակով պիտի այրիս և սպառի սս...

Ով Լուսին Լուսին, Մասիսի գագաթէն անցար՞, զաւերդ շուրջ ածի՞ր, Արագածի ոտքը՝ Էջմիածնայ պարսպին տակ թաթած հայոց գաղթական ժողովուրդն տեսա՞ր որպէս յաշխամավերջին ծառերէն թափուած դեղնած տերեւներ. գիտեցի՞ր նոցա ապաժոյժ վիճակ. տեսա՞ր այն գեսնի վերայ նուազած ու թալկացած մայրեր, որոց ցամքած կուրծքերէն կախուեր էին դիեցիկ մանուկներ. նոքա կական բառնալով կաթ կը խնդրէին և մայրեր զնոց,

Ցեռոյ կը դառնայ դէպ ի Էջմիածին, խօսքը Կաթողիկոսին կ'ուղղէ, ուր որ տարիներ վերջ իրեն պիտի ուղղէին հայ թշուառներ արիւնոտ աչքերնին՝ ըսելով.

«Ով հայր ու հայրապետ հայրապետ հայոց. Էջմիածնայ վեհարանի լուսամուտէն կը դիտէ՞ք դէպ ի բագրեւանդայ կոտորածի դաշտ, թէ կ'ասէք հեռու է այքէս և կարճ է իմ ձեռքս. ուրեմն թողէ՞ք մեռելոց դաշտը՝ դարձուցէք ձեր այքը գաղթական ժողովուրդին վրայ, որ կենդանւոյն մեռած ու թաւալած են Էջմիածնայ պարիսպներուն տակը. Էջ այսի, դու իմքնին հայրական գորովվովդ մատակարար եղիր. դոքա սուրբ Գրիգորի մնացորդ որդիքներն են. տե՛ս, ի՞նչպէս մեզի, կապուտ, ամենի՛ անստացուած ձեր հայրական գիրկ դիմեր են, հաց կ'ուզեն, հանդերձ կ'ուզեն, համգստարան կ'ուզեն. ժողովո՛ւրդ, պատսպարէ՛ զիրենք Ալրարատայ ծոցին մէջ. Դոքա Եփրատայ ակնոցէն և Նպատ լեռնէն կու գան, Երասխէն, Արագածէն և Մասիսէն պաշտպանութիւն կը խնդրեն, ո՛հ, չգիտեմ թէ կը զանե՞ն թէ յուսով կը թաթաւեն»՝

Կոտորածները, աւարառութիւնը և հրդեհը վերջ տուին։ Հայրիկը կը դադրի ողբալէ ու հառաչելէ։ Խաղաղութիւնը կը տիրէ հիմայ. և այդ է որ հայութիւնը պիտի բազմացնէ։ Հայոց Հայրիկը, այդ խաղաղութիւնը կ'ուզէ արմատացնել նաեւ հայ ընտանեաց մէջ, ու այդ նպատակով 1878*ին «Սիրաք և Սամուէլ»ը կը հրատարակէ։ «Սիրաք»ը՝ ինքն Հայրիկն է, և «Սամուէլ»ը՝ Հայութիւնը։ «Բարեկամ ժողովուրդ Հայոց, կը խօսի Նախարանով, Դրախտի Ընտանիքէն յետոյ Սիրաք և Սամուէլ անուն նոր երկասիրութիւնս, զոր Հայոց հայրերուն համար գրեցի, դարձեալ ձեզ կը նուիրեմ, ժողովուրդ Հայոց. որոյ նիւթ և պարունակութիւնն՝ աշխարհիս կրթական դասերն են, զորս բարի հայր Սիրաք կ'աւանդէ իւր զարգացեալ Սամուէլ որդւոյն՝»։*

Այս զրքով կը փակէ Խրիմեան իր գրականութեան շրջանը և կաթողիկոս ընտրուելէն ետք 1894*ին Էջմիածնէն կը հրատարակէ «Պապիկ և թոռնիկ» հատորն ալ։*

Երբ 1879*ին Պերլինի մէջ վեհաժողովը պիտի գումարուէր՝ հոն պիտի քննուէին նաեւ Սան — Սթէֆանոյի Ռուս — Թրքական դաշնադրութեան պայմանները, որուն* 16 *երրորդ յօդուածը (մոցուած Ներսէս վարժապետեան պատրիարքէն) մեզի, Հայոց խնդրոյն կը վերաբերէր, կ'ուզէր ուրեմն այդ վեհաժողովոյն մէջ Հայութիւնն ալ իր ձայնը ունենալ։*

Ցարմարազոյն անձը կը նկատուի Հայոց Հայրիկը, որ խորէն Նարպէյի ընկերակցութեամբ, իրեն քարտուղար առնելով զա. Մ. Զերազ՝ յետ քաղաքագիտական ճամբորդութիւն մ'ընելու՝ գնաց Պերլին Հայոց կամքը ներկայացնելու։ Հոն, Սան — Ստեֆանոյի 16*րդ յօդուածը ծանօթ* 61*երրորդ յօդուածոյն կը փոխուի, որով չփոխուեցաւ ոչ Խրիմեան և ոչ Հայութիւնը։*

Պոլսէն քաշուեցաւ Խրիմեան և գնաց առանձնանալու իր ծննդավայրը վանք. 1879*ի սովը լքած է իր հայրենակիցները. այդ սովը սակայն գործելու ասպարէզ մը բացաւ իր դիմաց. նա իր ձայնը մինչեւ Պոլիս հասցուց և օգնութիւն ուզեց հայ հարուստներէ. և 'սովը արմատական կերպով խլելու դիտումով երկրագործական գիշերօթիկ վարժարան մը հիմնեց, հայ մշակները բազմացնելու համար. սակայն այդ վարժարանը և ոչ իսկ երկու տարի կրաւ ապրիլ։*

Կամաց կամաց ազգային շարժումը սկսած էր, ու Հայրենիքի խորն իսկ կ'ազ-

---

1. Սոյն գրքին չորրորդ ապ. ի Թիֆլիս 1893ին։

digitised by A.R.A.R.@

դուէր անկից. կառավարութիւնը Խրիմեանի ներկայութիւնը վանի մէջ չախորժեցաւ ու 1885ին զինքը Պոլիս կանչեց և հինգ տարի վերջ զինքը Երուսաղէմ աքսորեց։

Այս ամէնը դիւթեց հայ ժողովուրդը և համակրելի ըրաւ զԽրիմեան. նա վանդակի մէջ առնուած սոխակ մը դարձաւ, և իր ամէն մէկ խօսքը ու խրատը հաճելի հայ ժողովրդեան։

Մակար կաթողիկոսի մահը (5 մայիս 1892) յարութիւն պիտի տար աքսորեալ Հայրիկին. ազգային կաթողիկոսն Հայոց Հայրիկն էր, բայց կաթողիկոս Խրիմեանը պիտի չկարենար իր հետ պահել Հայոց Հայրիկ տիտղոսը։

Մեր ռուսահայ եղբայրները որոնք հեռուէն ճանչցած էին զԽրիմեան իրենց բովանդակ ազդեցութիւնը գործածեցին Հայոց Հայրիկը Էջմիածնայ գահուն վրայ բարձրացնելու համար. և տաճկակայ պատգամաւորութիւնը ակամայ իր քուէն տուաւ ու լիաքուէ կաթողիկոս հռչակուեցաւ։

Իբրեւ վերջաբան մը դնենք հոս երկու մանրավէպեր՝ զորս պատմեց Գեր. Կոմիտաս վարդապետ։

Գերմանացի հնախոյզ մը Էջմիածին կ'այցելէ. յետոյ Վեհափառ Խրիմեանի կ'ուզէ ներկայանալ։

Ո՞վ է այս պարոնը, կը հարցնէ Խրիմեան։

Գերմանացի հնախոյզ մը։

Հա՛, ըսէ՛ք իրեն որ ես թանկագին հնութիւն մը ունիմ. հարցուցէ՛ք քանի՞ տարեան հնութիւն կը կարծէ։

Հինգերորդ դարու, կը պատասխանէ օտարականը թարգմանին բերնով։

Անկէ՛ց ալ հին։

Քրիստոսի ժամանակէն։

Անկէց ալ հին։

Ու հնախոյզը հետաքրքրուած այս հնութենէն կ'ըսէ։

Ցեանեմ վեհափառ տէր, ինչ է այդ թանկագին հնութիւնը։

Իմ Ազգս է, Քրիստոսէ ալ հին, Մովսէսէն ալ հին. իմ թշուառ ազգը, որ անտեսած այս թանկագին հնութիւնը՝ հին քար մը կամ առարկայ մը փնտռելու կ'ելլէր։

Թիֆլիզի փոխարքան զԽրիմեան իր պալատը կը հրաւիրէ, ու որպէս զի պալատին վեհութիւնը ազդեցութիւն մ'ընէ կաթողիկոսին վրայ՝ հոյակապ սանդուխին ծայրը երկու սպիտակ արջեր կը դնէ։ Խրիմեան վեր կ'ելլէ ու և ոչ իսկ ուշադրութեան կ'առնու այդ արջերը որոնք փայլփլուն աչքերնին հիւրին յառած էին։ Փոխարքան կաթողիկոսին անտարբերութեան վրայ զարմացած՝ կը հարցնէ. — ինչպէս, վեհափառ Տէր, այս արջերէն չվախցա՞ք։

Զէ՛, կ'ըսէ Հայրիկը թարգմանին ձեռքով, ըսէ՛ք փոխարքային որ ես ասկէ աւելի կատաղիները տեսած եմ Պետերբուրգի մէջ։

Ինչ որ ալ ըլլայ սակայն՝ Խրիմեան պիտի ապրի հայ ժողովրդին հետ իբրեւ հայրիկ, հայ պատմութեան մէջ իբրեւ գործիչ և հայ մատենագրութեան մէջ իբրեւ գրագէտ։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@